

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԸՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ԼՈՐ ՇՐՋԱՆ, Թ. Տարի, Թիւ 408, Ուրբաթ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2017

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

Գինեձօն-Շնորհահանդէս՝ «Երիտասարդ Ընտանիքին Աստուածաշունչը» Հրատարակութեան



Ուրբաթ, 20 Հոկտեմբեր 2017-ին Քուէյթի Սրբոց Վարդանանց եկեղեցոյ մէջ, հաւատացեալներու հոծ բազմութեան մը ներկայութեամբ, կատարուեցաւ Ս. պատարագ, որուն յաջորդեց «Երիտասարդ ընտանիքին Աստուածաշունչը» գիրքին գինեձօնի արարողութիւնը, եկեղեցոյ սրահին մէջ:

Այս հրատարակութիւնը իրականութիւն դարձուցած է Ծոցի երկիրներու Աստուածաշունչի ընկերութիւնը, որ կը գործէ դոկտ. Հրայր Ճէպէճեանի տնօրինութեամբ:

Բացման խօսքը կատարեց եկեղեցոյ հոգեւոր հովիւ Արտակ Ա. քինյ. Քեհեայեանը: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ Աստուծոյ խօսքը յաջորդ սերունդներուն փոխանցելու անհրաժեշտութեան՝ իբրեւ Սովսէսի միջոցով տրուած աստուածային պատգամ, իբրեւ Աստուծոյ պահպանութեան ու հոգատարութեան խոստումը՝ Իր օրէնքներուն ու պատգամներուն հնազանդող ժողովուրդին: Ապա հրաւիրեց Հրայր Ճէպէճեանը, որպէսզի արտասանէ իր սրտի խօսքը:

Դոկտ. Ճէպէճեան նախ ուրախութիւն յայտնեց, որ այս հրատարակութիւնը կը բաժնուի հայ դպրութեան՝ թարգմանչաց վարդապետներու տօնական օրերուն, երբ հայ համայնքները իրենց ազգային թէ կիրակնօրեայ վարժարաններուն մէջ կը կեդրոնանան հայ գիրի եւ գրականութեան սկիզբ տուած մեսրոպեան սերունդի տարած աշխատանքին՝ դիտել տալով, որ այս Աստուածաշունչը յատուկ եւ մատչելի է մերօրեայ պայմաններուն մէջ ապրող եւ հասակ նետող մանուկներուն, պատանիներուն եւ երիտասարդներուն, մանաւանդ որ թէ՛ գրութեան ոճը եւ թէ՛ պատկերներու ներկայացումը հաճելի պիտի ըլլան բոլորին: Իբրեւ Ծոցի երկիրներու Աստուածաշունչի ընկերութեան ընդհանուր քարտուղար՝ ան ամփոփ ձեւով ներկայացուց ընդհանրապէս ընկերութեան նպատակն ու տարած մեծ աշխատանքը: Աւելի քան 200 երկիրներու մէջ Աստուածաշունչի ընկերութեան գրասենեակներն ու աշխատակազմերը իրենց նպատակը դարձուցած են Աստուածաշունչը հասանելի դարձնել բոլորին՝ իրենց մայրենի լեզուներով: «Ի նչ մեծ ուրախութիւն է ունենալ Աստուածաշունչը մայրենի լեզուով: Ուրախ եմ, որ գտնուեցան՝ անոր թարգմանը, շարադրողը եւ տպագրողը, ինչպէս նաեւ՝ բարեբարները, որպէսզի այսօր որպէս նուէր բաժնուի բոլորին: Մենք վստահ ենք, որ մեծ հաճոյքով պիտի կարդան բոլորը եւ, ինչո՞ւ չէ, շատերու կեանքը պիտի փոխուի այս ընթերցումներով, եւ անոնք իրենց կեանքի ծրագիրներուն եւ աշխատանքներուն մէջ օրհնութիւն պիտի գտնեն Աստուծմէ»,

ըսաւ Հրայր Ճեպէճեան: Աւարտին, ան իր շնորհակալութիւնը յայտնեց Քուլյօի եւ շրջակայից թեմի առաջնորդ Մասիս Ծ. վրդ. Զօպույեանին, որ առաջին օրէն, երբ գերմաներէն օրինակը տեսաւ, փափաքեցաւ եւ քաջալերեց, որ անպայման այս հրատարակութիւնը իր յաջողութիւնը ունենայ:

Մասիս Ծ. վրդ. Զօպույեան իր կարգին շնորհաւորեց տարուած աշխատանքը եւ անգամ մը եւս շեշտեց Աստուածաշունչի կարեւորութիւնը հայ նոր սերունդներու դաստիարակութեան համար՝ որպէս ամէնօրեայ սնունդ, որուն դերը անփոխարինելի է: «Մեր համոզումն ու հաւատքն է, որ Աստուածաշունչը կը վերանորոգէ, կ'երիտասարդացնէ մարդը, կը հանգստացնէ յոգնածը, կը գօտեպնդէ յուսահատը եւ կը բժշկէ հիւանդը», հաստատեց ան: Հայր սուրբը գնահատեց Աստուածաշունչի ընկերութեան տարած աշխատանքը՝ ուժ եւ կորով մաղթելով անոնց:



Ապա քահանայ հայրը բեմ հրաւիրեց Ազգ. վարչութեան ատենապետ Մունիր Դարբինեանը, տէր եւ տիկին Ճեպէճեանները եւ Աստուածաշունչի ընկերութեան Քուլյօի բաժինի տնօրէն Եուսեֆ Սապրին, որպէսզի կատարուի գիրքին զինեման:

Արարողութենէն ետք բոլոր ներկաները իրենց օրինակները ստանալով, մեկնեցան եկեղեցին՝ իրենց հետ տանելով յիշատակելի օրուան մը տպաւորութիւնները եւ իրենց առօրեան լեցնող Աստուծոյ խօսքը՝ «Երիտասարդ ընտանիքին Աստուածաշունչը»:

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ» **«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»**

Մեր նախահայրերը Աստուածաշունչը հայերէնի թարգմանելով զայն մատչելի, տեսանելի ու շօշափելի դարձուցին մեր ժողովուրդին եւ անոր ուղղելով Աստուծոյ խօսքին մեր կեանքերուն մէջ Աստուածաշունչի արժէքները վաւերական իրականութեան վերածեցին:



Արդ, մեր զաւակներուն հոգեւոր ու բարոյական արժէքները ներկայ աշխարհի հոսանքներուն դիմաց ամբօրէն պահելու եւ Աստուածաշունչը դարու պահանջներուն համահունչ ձեւով ու ոճով երիտասարդութեան հրամցնելու հրամայականէն մեկնած՝ Արաբական Ծոցի Երկիրներու Աստուածաշունչի ընկերակցութեան

Տնօրեն՝ Տոքթ. Հրայր Ճեպեճեան, սիրայօժար ստանձնեց «Երիտասարդ Ընտանիքի Աստուածաշունչը» սքանչելի հատորի հրատարակութեան ողջունելի աշխատանքը:

Չորեքշաբթի, 25 Հոկտեմբեր 2017ին Տոքթ. Ճեպեճեան այցելեց Քուէյթի Ազգային վարժարան, ընկերակցութեամբ Քուէյթի Աստուածաշունչի Ընկերակցութեան Տնօրեն Շէյխ Եուսէֆ Սապրիի եւ Արժ. Տ. Արտակ Ա. Քինյ. Քէհեայեանի ու իւրաքանչիւր աշակերտի (առաջինն վեցերորդ) նուիրեց նշեալ գեղատիպ գիրքը, քաջալերելով ներկայ սերունդը կարդալու Աստուծոյ խօսքը, հասկնալու եւ կեանքի վերածելու անոր պատգամները:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԸ ԱՅՑԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Հինգշաբթի, 26 Հոկտեմբեր 2017-ի առաւօտուն, Թեմիս Առաջնորդ Գերայ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպուեան, Ազգային Առաջնորդարանէն ներս ընդունեց այցելութիւնը Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Տիար Գառնիկ Մկրտիչեանին, ընկերակցութեամբ ընկ. Յակոբ Պետիբեանին:



Այցելութիւնը առիթ մը հանդիսացաւ շրջելու կառոյցին զանազան յարկերն ու բաժանմունքները, մանաւանդ նոր եկեղեցին, նոր առաջնորդարանը եւ ներքնասրահը: Տիար Գառնիկ Մկրտիչեան բարձրօրէն գնահատեց համայնքին սոյն մեծ իրագործումը եւ կատարուած հսկայ աշխատանքը, վերջապէս համայնքը սեփականատերը դառնալով իր եկեղեցիին եւ առաջնորդարանին, որ պատիւ կը բերէ թէ համայնքին եւ թէ վերոնշեալ մեծ ծրագիրը կեանքի կոչող եւ համայնքի երկար տարիներու երազը իրականացնող ազգայիններուն ու բարերարներուն: Հայր Սուրբը իր կարգին գնահատեց Հ.Մ.Ը.Մ.Ի առաքելութիւնը, որ Հայաստանէն մինչեւ Արցախ եւ Սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ լծուած է նոր սերունդներու բարոյական ու ազգային դաստիարակութեան աշխատանքին, իրենց առաքելութեան կիզակէտը դարձնելով հայ ժողովուրդին ծառայութիւնը:

Տեղի Ունեցաւ ՀՕՄ ՔՄՄ-ի 2017-2018 Տարեշրջանի Ձեռնարկներու Առաջինը՝ Նախաճաշ



Հայ Օգնութեան Միութեան Քուէյթի Մեկուսի Մասնաճիւղի Վարչութիւնը կազմակերպեց իր տարեկան ձեռնարկներու առաջինը՝ նախաճաշ, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 20 Հոկտեմբեր 2017-ին, Holiday Inn-ի սրահէն ներս:

Ձեռնարկը իր ներկայութեամբ պատուեց Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերայ. Տ. Մասիս Ծ.

Վրդ. Զօպույեանը, որ իր հայրական աղօթքով օրհնեց օրուան սեղանը:

Մրահի մուտքին, ներկաները իբր յուշանուէր ստացան մայր հայրենիքը խորհրդանշող գեղեցիկ նուռեր: Օրուան խօսնակն էր ընկհ. Ժօզեֆին Պերպերեան, որ բարի գալուստի խօսքէն ետք հրաւիրեց վարչութեանս ատենապետուհի՝ ընկհ. Անժելա Գահուէճեանը, որ փոխանցեց վարչութեան խօսքը:



Ձեռնարկի ընթացքին, ընկերային յանձնախումբի պատրաստած խաղերը հաճելի մթնոլորտ ստեղծեցին: Ներկաները բարձր տրամադրութեամբ մեկնեցան՝ վարչութեանս նորանոր յաջողութիւններ մաղթելով:

ՀՕՍ ՔՄՄ
Քարոզչական Ցանձնախումբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱԽԱՑՄԱՆ 26 ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

Երկուշաբթի 23 Հոկտեմբերի երեկոյեան, Քուէթի Սալուա Սապահ Ալ Ահմատ շքեղ սրահէն ներս տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան վերանկախութեան 26 ամեակի նշումը՝ կազմակերպութեամբ՝ Քուէթի մօտ ՀՀ դեսպանութեան: Ի շարս պետական, դիւանագիտական եւ կրօնական հիւրերու, Թեմիս Առաջնորդ Գերպ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպունեան եւ թեմական բոլոր կառոյցներու մարմինները ներկայ գտնուեցան ընդունելութեան: Այս առթիւ Հայր Սուրբը շնորհաւորեց ՀՀ Քուէթի մօտ արտակարգ եւ լիազօր Դեսպան՝ Տիար Մանվել Բաղդեանը, ազնուափայլ տիկինը՝ Լիլիթ Գալստյանը եւ դեսպանատան պաշտօնակազմը: Ան հաստատեց որ իւրաքանչիւր հայու պարտքն է գործել եւ ծառայել վերանկախացեալ Հայաստանի հզօրացման ու բարգաւաճման համար:



ՀԱՅԿԱԿԱՆ

Նախագահ Սահակեանը Եւ Քասաբիչիքը Քննարկած Են Շփման Գիծին Վրայ Տիրող Իրավիճակը

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան 25 Հոկտեմբերին ընդունած է ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անճէյ Քասաբիչիքը:

Արցախի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութեան փոխանցումով՝ հանդիպումին քննարկուած են Լեռնային Ղարաբաղի եւ Ազրայէճանի զինուած ուժերու շփման գիծին մէջ տիրող իրավիճակին վերաբերող շարք մը հարցեր:

Հանդիպում Նախարար Լեւոն Մնացականեանի Հետ

24 Հոկտեմբերին Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար, պաշտպանութեան բանակի հրամանատար, գոր. Լեւոն Մնացականեան ընդունած է ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անճէյ Քասաբիչիքը:

Հանդիպումին ընթացքին քննարկուած են ղարաբաղեան-ազրայէճանական հակամարտ զօրքերու շփման գիծին մէջ նախորդ օրերուն ստեղծուած լարուած իրադրութիւնը: Յատկապէս՝ բանակի հրամանատարը դեսպան Քասաբիչիքին ներկայացուցած է ազրայէճանական զինուած ուժերուն կողմէ «ՍՓԱՅՔ» տիպի հակազրահապատային կառավարուող հրթիռներու եւ սկանանետերու կիրարկման մասին ապացոյցներ:

Երեւանի Մէջ Տեղի Ունեցաւ Եւրասիական Միջկառավարական Խորհուրդի Նիստը

Երեւանի «Մուլթի Կրանտ Հոթել» պանդոկին մէջ Չորեքշաբթի օր տեղի ունեցած է Եւրասիական միջկառավարական խորհուրդի նիստը: Նիստին կը մասնակցին Հայաստանի, Ռուսիոյ, Պիեղոռուսիոյ, Ղազախստանի եւ Խրրիւրգիստանի վարչապետները:

Նիստին կը նախագահէր Եւրասիական տնտեսական յանձնաժողովի նախագահ Տիգրան Մարգսեան:

Նիստին ընթացքին ելոյթ ունեցաւ Ռուսիոյ վարչապետ Տիւրքի Մետվետեւ: Ան նախ հանդիպումին կազմակերպման համար շնորհակալութիւն յայտնեց հայկական կողմին՝ վարչապետ Կարէն Կարապետեանի գլխաւորութեամբ:

«Արդիւնաւէտ քննարկում էր: Մենք Եւրասիական տնտեսական միութեան ծիրին մէջ կը ձեւաւորենք ապրանքներու, ծառայութիւններու եւ աշխատուծի ազատ տեղաշարժի կարելիութիւններ: Ատիկա դիրքին աշխատանք չէ եւ կը պահանջէ երկար ու տքնաջան աշխատանք», ըսաւ ան՝ աւելցնելով, որ ընթացիկ տարուան առաջին կիսուն Եւրասիական տնտեսական միութեան երկիրներու միասնական համախառն ներքին արդիւնքը աճած է 1,8

առ հարիւրով, աճը կը վերաբերի բոլոր անդամ երկիրներուն, Եւրասիական տնտեսական միութեան մէջ ապրանքաշրջանառութիւնը աճած է 28 առ հարիւրով, երրորդ երկիրներու հետ արտաքին առեստուրի շրջանառութիւնը աճած է 26 առ հարիւրով: Սակայն յառաջ երթալու համար կարեւոր է կատարելագործել միութեան իրաւական դաշտը:

Ելոյթ ունեցաւ նաեւ Հայաստանի վարչապետ Կարէն Կարապետեան, որ անդրադարձաւ արդիականացման եւ մրցունակութեան չափանիշներուն. «Այսօր գրեթէ կարելի չէ խօսիլ արդիականացման եւ մրցունակութեան բարձրացման մասին՝ առանց թուային օրակարգի: Հասկնալի է, որ այս ծաւալուն հարցին լուծման անհրաժեշտ է հասնիլ՝ հաշուի առնելով տնտեսութիւններու՝ այդ փոփոխութիւնները ընդունելու ունակութիւնը, առանց գործառնութիւններու համար աւելորդ ծախսերու:

Ռուսիոյ Վարչապետ Տմիթրի Մետվետեի Այցելութիւնը Հայաստան. Հանդիպումներ՝ Նախագահ Սարգսեանի Եւ Վարչապետ Կարապետեանի Հետ

Երեքշաբթի, 24 Հոկտեմբեր 2017-ին, Ռուսիոյ վարչապետ Տմիթրի Մետվետեի հասաւ Երեւան:

Մետվետեի դիմաւորուեցաւ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Կարէն Կարապետեանի կողմէ:

Դիմաւորման պաշտօնական արարողութենէն ետք Ռուսիոյ վարչապետը ուղղուեցաւ Ծիծեռնակաբերդի յուշահամալիր՝ յարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

Այնուհետեւ Հայաստանի կառավարութեան շէնքին մէջ տեղի ունեցաւ երկու երկիրներու վարչապետներուն հանդիպումը, որմէ ետք միջկառավարական, միջնախարարական եւ միջշրջանային համագործակցութեան առնչուող փաստաթուղթերու ստորագրում:

Հայաստան պաշտօնական այցելութեան ընթացքին Ռուսիոյ վարչապետը հանդիպում մը ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի հետ:

Այսօր, 25 Հոկտեմբերին Երեւանի մէջ տեղի պիտի ունենայ Եւրասիական միջկառավարական խորհուրդի նիստը:

Նախագահ Սարգսեան Ընդունած Է Խորհուրդին Անդամները

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան Չորեքշաբթի օր ընդունած է Եւրասիական միջկառավարական խորհուրդի անդամները՝ Հայաստանի վարչապետ Կարէն Կարապետեանը, Ռուսիոյ վարչապետ Տմիթրի Մետվետեի, Խըրիսըզիստանի Հանրապետութեան վարչապետ Սապար Իսաբովը, Պիլեոռուսիոյ Հանրապետութեան վարչապետ Անտոն Բոպէպովը, Ղազախստանի Հանրապետութեան վարչապետ Պաքիթեան Սագինթայեւը, որոնք Երեւանի մէջ

կը մասնակցին Երասիական միջկառավարական խորհուրդի նիստին: Հանդիպումին ներկայ եղած է նաև Երասիական տնտեսական յանձնաժողովի անձնակազմի նախագահ Տիգրան Սարգսեան, կը յայտնէ Հայաստանի նախագահի աշխատակազմի հասարակութեան եւ մամուլի միջոցներու հետ կապերու վարչութիւնը:

Հանրապետութեան նախագահը ողջունած է խորհուրդի անդամ երկիրներու վարչապետները եւ վստահութիւն յայտնած, որ Երեւանի մէջ կայացած միջկառավարական խորհուրդի նիստը արդիւնաւէտ պիտի ըլլայ ու պիտի ծառայէ Երասիական ամբողջականացումը յառաջ մղելուն, ինչպէս նաև պիտի նպաստէ երկու շաբաթ առաջ Երասիական տնտեսական միութեան հերթական վեհաժողովին բարձր մակարդակով ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու իրականացման: Սարգսեան կարելոր նկատած է խորհուրդի գործունէութիւնը եւ շնորհակալութիւն յայտնած աշխուժ ու արդիւնաւէտ աշխատանքի համար:

Ազգային Ժողովը Ընդունեց «Պաշտպանութեան Մասին» Օրէնքը


Հայաստանի Ազգային ժողովը վաւերացուց նախանցեալ օր քննարկուած բոլոր նախագիծերը: «Պաշտպանութեան մասին» օրէնքի քուէարկութեան ժամանակ վարման կարգով ելոյթ ունեցաւ «Ելք» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեան: Ան նշեց, որ իրենց խմբակցութիւնը դէմ պիտի քուէարկէ, քանի որ զինուած ուժերու գլխաւոր հրամանատարութեան հետ կապուած խնդիրներ կան:

Օրէնքը առաջին ընթերցումով ընդունուեցաւ ձայներու 86 կողմ, 9 դէմ, 0 ձեռնպահ յարաբերակցութեամբ:

Մետվետերը՝ Նախագահ Սարգսեանին. «Մենք Գործընկերներ Ենք, Բարեկամներ Ենք»

Չորեքշաբթի օր, նախագահ Սերժ Սարգսեան ընդունեց Ռուսիոյ վարչապետ Տմիթրի Մետվետերը:

Հանրապետութեան նախագահը, ողջունելով հիւրը, ընդգծած է, որ Ռուսիոյ վարչապետին այցելութիւնը կը կայանայ Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 25-ամեակի տարուան ընթացքին՝ գոհունակութեամբ փաստելով, որ այդ ընթացքին հսկայական աշխատանք կատարուած է:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

**«Թրքական Բռնագրաւող Բանակին Իտլիպէն Հեռացումը
Կը Պահանջենք» Ըսաւ Մըքտատ**

Մուրիոյ արտաքին գործոց փոխնախարար Ֆայսալ Մըքտատ Իրանի գերագոյն հոգեւոր պետի խորհրդական Ալի Աքպար Վիլայեթիի հետ իր հանդիպումէն ետք յայտնեց. «Եթէ Ուաշինկթընի կողմէ ահաբեկչութեան աջակցութիւնը չըլլար, շատոնց ատոր վերջ տուած կ'ըլլայինք»:

Ան պահանջեց. «Թրքական բռնագրաւող բանակը Իտլիպէն թող հեռանայ, եւ Թուրքիան պէտք է յարգէ Ապթանայի մէջ տրուած որոշումները»:

Մըքտատ նաեւ նշեց. «Հիւսիսային Իրաքի իրադարձութեան վերաբերեալ Իրանի եւ մեր կեցուածքը միեւնոյնն է, եւ միայն միացեալ Իրաք մը պիտի ճանչնանք»:

**Էրպիլ Պաղտատին Կ'առաջարկէ Անկախութեան
Հանրաքուէի Արդիւնքը Սառեցնել Եւ Բանակցութիւններու
Սկսիլ**

Իրաքի Քրտական ինքնավար մարզի կառավարութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ առաջարկեց սառեցնել մարզի անկախութեան շուրջ անցեալ ամիս տեղի ունեցած հանրաքուէին արդիւնքը, անմիջապէս զինադադար հաստատել եւ Իրաքի կեդրոնական կառավարութեան հետ բաց երկխօսութեան սկսիլ:

Կառավարութեան պաշտօնական կայքին վրայ տեղադրուած յայտարարութեամբ քրտական կողմը Պաղտատին առաջարկած է դադրեցնել կրակոցը, անցնիլ բաց բանակցութիւններու՝ հիմնուելով Իրաքի սահմանադրութեան վրայ եւ իր կողմէ պատրաստակամութիւն յայտնելով սառեցնել անկախութեան վերաբերեալ հանրաքուէին արդիւնքները:

«Վտանգաւոր կացութիւնը, որուն ենթակայ են Քիւրտիստանն ու Իրաքը, բոլորէն կը պահանջէ պատմական պատասխանատուութեան տէր ըլլալ եւ հարցերը չմղել իրաքեան ուժերու եւ փեշմերկաներու միջեւ ճակատումի», կը նշէ յայտարարութիւնը՝ աւելցնելով. «16 Հոկտեմբեր 2017-էն մինչեւ օրս իրաքեան ուժերու եւ փեշմերկաներու միջեւ բախումները պատճառ դարձան, որ երկու կողմերէն ալ կորուստներ արձանագրուին, եւ այդ բախումները կրնան հիւծումի պատերազմի առաջնորդել, ուստի նաեւ Իրաքի բաղադրիչ մասերուն միջեւ ընկերային ցանցի քանդումին»:

Քրտական իշխանութիւնները զգուշացուցին, որ երկու կողմերուն միջեւ բախումներէն ոչ ոք յաղթական դուրս պիտի գայ եւ երկիրը պիտի առաջնորդէ ամբողջական քանդումի: «Ուստի մեկնելով Քիւրտիստանի եւ Իրաքի ժողովուրդին նկատմամբ պատասխանատուութեան դիրքէն՝ իրաքեան կառավարութեան, իրաքեան ու միջազգային հասարակութեան կ'առաջարկենք հետեւեալը», գրուած է յայտարարութեան մէջ:

Աւելի ուշ, Իրաքի կառավարութեանն աղբիւր մը «Սքայ Նիուզ»-ին յայտնեց, որ Պաղտատ Քրտական մարզի անկախութեան հանրաքուէի արդիւնքին չեղեալ յայտարարումը կ'ուզէ եւ ոչ թէ առկախումը:

Իրան Վերաբացաւ Իրաքի Քրտական Մարզին Հետ Պաշմախի Սահմանային Անցքը

Իրանեան իշխանութիւնները Չորեքշաբթի օր վերաբացին Իրաքի Քրտական ինքնավար մարզին հետ Պաշմախի սահմանային անցքը, որ 15 օրէ ի վեր փակուած էր: Այս մասին կը հաղորդէ «Մայատին»:

Քրտական մարզի մաքսային բաժանմունքի տնօրէն Սամալ Ապտէլ Ռահման յայտնեց. «Իրան վերաբացաւ Պաշմախի սահմանային անցքը»:

Միւս կողմէ, մարզի Սուլէմանիէ քաղաքի առեւտուրի եւ ճարտարարուեստի գրասենեակի նախագահ Սիրուան Մոհամետ իր կարգին յայտարարած էր. «Քիւրտիստանի մարզի եւ Իրանի միջեւ առեւտրական եռուզեռը վաղը՝ չորեքշաբթի օր պիտի վերսկսի Պաշմախի անցքին ճամբով, եւ կը նախատեսուի, որ յառաջիկայ օրերուն այլ անցքերուն վրայ եւս առեւտրական եռուզեռը սկսի»: «Անցքը բաց պիտի ըլլայ բոլոր ապրանքներուն դիմաց», նշեց ան:

Մոհամետ յայտնեց, որ անցնող օրերու ընթացքին անցքերու փակումը նկատառելի կերպով ազդած է Քրտական մարզի եւ Իրաքի մէջ առեւտրական շրջանառութեան վրայ:

Յիշեցնենք, որ Իրան Քրտական մարզին հետ իր սահմանային անցքերը փակած էր 25 սեպտեմբերին մարզին մէջ տեղի ունեցած անկախութեան հանրաքուէէն ետք:

Թիլըրսըն. «ՏԱՀԵՇ-ի Պարտութիւնն Ու Սուրիոյ Իրադարձութիւնները Իրանի Յաղթանակը Չեմ Նկատեր»

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Ռեքս Թիլըրսըն յայտնեց, թէ իր երկիրը կ'ուզէ, որ Սուրիան միացեալ ըլլայ, եւ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ անոր կառավարութեան մէջ որեւէ դեր չունենայ:



Ան նշեց, որ Ասատ ընտանիքի իշխանութիւնը կը մօտենայ իր աւարտին, եւ առկախ մնացած միակ հարցը ատիկա ինչպէ՛ս գործադրելն է:

«ՏԱՀԵՇ-ի պարտութիւնն ու Սուրիոյ իրադարձութիւնները Իրանի յաղթանակը չեմ նկատեր, այլ սուրիական հողերու վրայ կացութեան իրանեան շահագործում մը», ըսաւ Թիլըրսըն՝ աւելցնելով, որ սուրիական ուժերուն արձանագրած յառաջխաղացքին միակ պատճառը ռուսական օդուժի աջակցութիւնն է:

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

Զրոյց-Ղասախօսութիւն՝ Հայկական Տարագներու Մասին

Կազմակերպութեամբ Վալանսի Հայ մշակոյթի տան, 13 Հոկտեմբերին «Չենեիէ» սրահին մէջ տեղի ունեցաւ զրոյց-ղասախօսութիւն եւ ցուցադրութիւն մը՝ «Հայկական ազգային տարագներ» խորագիրին տակ:

Սոյն ղասախօսութեան ներկայ էին քաղաքական անձնատրութիւններ եւ հայկական միութիւններու ներկայացուցիչներ:

Հայ մշակոյթի տան նախագահ Նազօ Ճինպաշեան յայտնեց, որ իրենց նպատակն է կազմակերպել նման մշակութային ձեռնարկներ՝ քաջալերելու եւ տարածելու համար հայկական պատմութիւնն ու մշակոյթը:



Օրուան հանդիսավարն էր վաստակաւոր արուեստագէտ, բեմական նկարիչ, ղասախօս՝ թատերական նկարագարդումներու, մշակութային ձեռնարկներու կազմակերպիչ, տարագներու եւ գիրքերու հեղինակ, մասնաւորաբար հրաւիրուած Հայաստանէն, Աշոտ Համբարձումեանը: Համբարձումեանին ընկերակցեցաւ Գայեանէ Աւագեանը:

Յայտնենք, որ սոյն ցուցահանդէսը փետրուար ամսուն քանի մը շաբաթ պիտի ցուցադրուի Վալանսի Հայ մշակոյթի տան սրահին մէջ:

Շողիկ Թորոսեանին Համերգը Մոնրէալի Մէջ

Հովանաւորութեամբ Քանատայի հայոց թեմի առաջնորդ Բարգէն արք. Չարեանի, 30 սեպտեմբերին Լաւալի «Պոն Փասթօր» եկեղեցոյ մէջ ելոյթ ունեցաւ լիբանանահայ սոփրանօ Շողիկ Թորոսեան, որ յատուկ հրաւեր ստացած էր Լաւալի Ս. Գէորգ Հայ առաքելական եկեղեցոյ կողմէ՝ համերգ մը տալու Ս. Գէորգի տօնին առիթով:



Բացման խօսքը արտասանեց Մեսրոպ Պերեճիքեանը, որ անդրադարձաւ Շողիկ Թորոսեանի կենսագրական գիծերուն՝ հաստատելով, որ անոր աստուածատուր տաղանդն ու զայն բարելաւելու անխոնջ աշխատանքը տարիներու ընթացքին անոր դիմաց բացին ասպարեզային լայն հորիզոններ՝ հայ թէ օտար բեմերու վրայ: Պերեճիքեան ամփոփ կէտերու մէջ ներկայացուց նաեւ Շողիկ Թորոսեանին դաշնակով ընկերակցող գաղութի դաշնակահար, երաժիշտ Խաչատուր Ղազարեանը:

WWW.AZTAGDAILY.COM



Յայտագիրը կ'ընդգրկեր դասական եւ հոգեւոր երգեր, ինչպէս՝ Ա. Պարթեւեանի «Ամէն հայր սուրբ»-ը, Ռ. Աթայեանի «Հաւուն հաւուն»-ը, Է. Յակոբեանի «Նոր ծաղիկ»-ը, Քաչինիի «Աւէ Մարիա»-ն, Կոմիտասի «Անտունի»-ն եւ «Քելեր ցոլեր»-ը, Ա. Տիգրանեանի «Անուշ» օփերայէն Անուշի երգն ու Անուշի խելագարութեան պատկերը, Մոցարթի «Ալեյուիա»-ն, Գ. Երկանեանի «Հայաստան»-ը, Բ. Կանաչեանի «Օրօր»-ը, Հ. Պերպերեանի «Անոր»-ը, Գ. Մանասեանի «Վարդ մը գետինը», Տեօ

Քրիստի «Քամ պէք թու Սորենթօ»-ն, Ա. Այվազեանի «Երեւան»-ը:

Աւարտին, թեմի առաջնորդ Բաբգէն արք. Չարեան շնորհակալագիրներ յանձնեց Ս. Գեորգ եկեղեցոյ «Կոլֆ»-ի եւ «Ֆէսթիվալ»-ի յանձնախումբերու անդամներուն, որոնք ժրջան կ'աշխատին ծառայելու գաղութին եւ եկեղեցոյ:

Առաջնորդ սրբազանը խօսքը ուղղելով մենակատարին եւ դաշնակահարին ըսաւ, որ անոնք հայ երաժշտութեան ելեւէջներուն ընդմէջէն եւ ստեղնաշարին վրայ մատներու զգայուն հպումով կրցան ներշնչել բոլոր ներկաները՝ հաստատելով, որ անոնք պատգամ մը տուին հայ երգին ու երաժշտութեան մասին, թէ՛ հայ երգը խօսք է, ապրում է, զգացում ու պայքարի դրսեւորում է:

Սրբազանը բարձրօրէն գնահատեց եւ շնորհակալական խօսք ուղղեց երեկոն կազմակերպողներուն՝ նկատել տալով, որ օտար երգին կողքին, պէտք է արդար ձեռով գիտնալ արժեւորել նաեւ հայ երգն ու երաժշտութիւնը:

Առաջնորդ սրբազան հօր «Պահապանիչ» աղօթքէն ետք ներկաները, ընկերակցութեամբ Շողիկ Թորոսեանին, երգեցին «Կիլիկիա» երգը:

Թարգմանչաց Եւ Հայ Ուսուցիչի Տօներու Նշում

15 Հոկտեմբերին Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի առաջնորդ Հայկազուն եպս. Նաճարեան Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ Թարգմանչաց տօնին առիթով մատուցեց Ս. պատարագ: Այս առիթով, կազմակերպութեամբ Ազգային առաջնորդարանի, նաեւ նշուեցաւ Ուսուցիչներու օրը՝ մասնակցութեամբ հայկական ամէնօրեայ եւ միօրեայ վարժարաններու մէջ պաշտօնավարող 54 ուսուցիչներու:



Պատարագին ընթացքին ուսուցիչները ստացան հաղորդութիւն: Տեղի ունեցաւ ուսուցիչներու օրհնութիւն: Սրբազան հայրը իր քարոզին մէջ յիշեց թարգմանչաց սերունդը՝ շեշտը դնելով հայ

գիրերու գիտին անկիւնադարձային կարեւորութեան վրայ եւ նկատել տալով, որ Աստուածաշունչի հայերէն թարգմանութեամբ Աստուած հայերէն սկսաւ խօսիլ հայուն հետ: Սրբազանը հաստատեց, որ թարգմանչաց փաղանգը լուսաւորեց հայ միտքը, հայ ճգնաւորը հայերէնի վերածեց քրիստոնէական գրականութիւնը եւ զայն մատչելի դարձուց հայ զարգացած սերունդներուն, աւելցնելով, որ այսօրուան թարգմանիչները ուսուցիչներն են, որոնք կը պայքարին հայութիւն սերմանելու համար մեր նորահաս սերունդներուն մէջ:

Պատարագի աւարտին «Էտկարեան» սրահին մէջ մատուցուեցաւ սիրոյ սեղան: Օրուան հանդիսավար Նշան Պասմաճեան ներկայացուց օրուան բանախօս շայ կաթողիկէ լոյս շարաթօրեայ եւ Համազգային Գօլստըն Ճեմարանի հայոց լեզուի ուսուցչուհի Իրինա Ղուկասեանը: Ղուկասեան ներկայացուց հայերէնի ուսուցման դժուարութիւնները Աւստրալիոյ մէջ եւ՝ իր պատրաստած մեթոտները, որոնք Գօլստըն Ճեմարանը որդեգրած է, որովհետեւ դասական հայերէն ուսուցման մեթոտները ժամանակավրէպ են: Ղուկասեան բացատրեց, որ իր եւ զինք նախորդող սերունդները չունէին այն դժուարութիւնները զորս կը դիմագրաւէ այսօրուան ուսուցիչը: Ան խօսեցաւ ծնողներու ունեցած կարեւոր դերակատարութեան մասին եւ գործադրուող իր ընդհանուր ծրագիրը ներկայացուց գործնական, մտածուած օրինակներով:

Այնուհետեւ սրտի խօսքեր արտասանեցին «Թարգմանչաց» վարժարանի տնօրէնուհի Զարուհի Մանուկեանը, Գօլստըն Ճեմարանի եւ Ալեքսանդր վարժարանի տնօրէններ Էտի Տեմիրճեանը, եւ Մանուկ Տեմիրճեանը, ինչպէս նաեւ՝ կրօն դասաւանդող ուսուցչուհի Շաքէ Վարդանեանը:

Աւարտին սրբազան հայրը իր գոհունակութիւնը յայտնեց Ղուկասեանի կատարած ախտաճանաչման եւ գործնական առաջարկներուն համար եւ քաջալերեց այսօրինակ արհեստավարժութեամբ յառաջ տանիլ մեր աշխատանքները: Ան նաեւ բարձր գնահատեց ուսուցիչներուն տարած անգուգական աշխատանքը՝ ի նպաստ հայակերտման:

Հայ Կրթական Հիմնարկութեան Տարեկան Ձեռնարկը



Վերջերս Էլ եւ Տայան Քապրալոֆ ամուլի Փասատինայի բնակարանին մէջ տեղի ունեցաւ Հայ կրթական հիմնարկութեան տարեկան ձեռնարկը՝ ներկայութեամբ աւելի քան 120 հոգիի:

Օրուան հանդիսավար Հայ կրթական հիմնարկութեան նախագահ Վահէ Յակոբեանը շնորհակալական խօսք ուղղեց բոլոր հրաւիրեալներուն, որոնք ձեռնարկի նախօրեակին 175 հազար ամերիկեան տոլարի խոստումներ կատարած են: Ան նաեւ ներկայացուց հիմնարկութեան կողմէ կատարուած աշխատանքները՝ յատուկ շնորհակալութիւն յայտնելով ձեռնարկի գլխաւոր հովանաւորներ Բարգէն եւ Յասմիկ Ամերեան ամուլին, որոնք 25 հազար ամերիկեան տոլար նուիրած էին՝ շարունակելով հիմնարկութեան նեցուկ կանգնելու իրենց աւանդութիւնը:

Այնուհետեւ Վահէ Յակոբեան «Կեանքի մը իրագործում» մրցանակը յանձնեց Նշան Փիրումեանին՝ չորս տասնամեակներու ընթացքին անոր մատուցած նուիրեալ եւ օրինակելի ծառայութիւններուն համար. Ն. Փիրումեան 36 տարի եղած է հիմնարկութեան վարչութեան

անդամ եւ ստանձնած է նաեւ անոր նախագահի պաշտօնը: Ան նաեւ նկատել տուաւ, որ վերջին 20 տարիներուն Փիրումեան ղեկավարած է Հայաստանի սահմանային շրջաններուն, Արցախի եւ Ջաւախքի մէջ մօտաւորապէս 200 դայրոցներու վերանորոգութեան ծրագիրները:

Ապա ցուցադրուեցաւ Հայ կրթական հիմնարկութենէն կրթանպաստներ ստացած 235 ուսանողներէ կազմուած խումբի մը պատրաստած տեսանիւթը, ուր անոնք իրենց շնորհակալութիւնը կը յայտնէին իրենց համալսարանական ուսումը իրականութեան վերածած նուիրատուներուն:

Ցեղասպանութեան Մասին Պատմող «Փրկութեան Քարտէս» Ժապաւէնի Անդրանիկ Ցուցադրութիւնը

Կազմակերպութեամբ Ռուսիոյ մէջ Հայաստանի դեսպանութեան, աջակցութեամբ «Առնօ Բարաջանեան հիմնարկ»-ին, 11 Հոկտեմբերին Մոսկուայի «Ռոլան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին առիթով պատրաստուած «Փրկութեան քարտէս» վաւերագրական ժապաւէնի անդրանիկ ցուցադրութիւնը:

«Փրկութեան քարտէս»-ը կը պատմէ հինգ մարդասէր կիներու՝ միսիոնարներ Քարեն Եփփէի, Մարիա Ճէթրպարնի (Դանիա), Պոտիլ Պետրնի (Նորվեկիա), Ալմա Եռհանսարնի (Շուէտ) եւ Աննա Հետտիկ Պիլի (Էսթոնիա) մասին: Նախքան ցուցադրութիւնը՝ ողջոյնի խօսքով հանդէս եկան Ռուսիոյ մէջ Հայաստանի դեսպանութեան դեսպանորդ Պորիս Սահակեանը եւ «Առնօ Բարաջանեան հիմնարկ»-ի նախագահ Ա. Սարգսեանցը, որմէ ետք ելոյթ ունեցաւ ժապաւէնը արտադրող Մանուէլ Մարիբէկեանը, որ խօսեցաւ շարժապատկերի ստեղծման գաղափարին ու անոր իրագործման, հեղինակային խումբին եւ հերոսուհիներու հայրենիքներուն մէջ ժապաւէնի ցուցադրութեանց մասին:

Քալիֆորնիոյ Ծերակոյտի Անդամ Էնթընի Փորթանթիոյի Այցելութիւնը Առաջնորդարան

10 Հոկտեմբերին Արեւմտեան թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեան Ազգային առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Քալիֆորնիոյ նահանգային ծերակոյտի անդամ Էնթընի Փորթանթիոյի: Հանդիպումին ներկայ էին առաջնորդական փոխանորդ Թորգոմ ծ. վրդ. Տօնոյեանը եւ շրջանի ներկայացուցիչ Արտա Չաքեանը:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Փորթանթիոյի ձեռք բերած իրագործումները Սաքրամենթոյի մէջ ու ապագայ աշխատանքային ծրագիրները, ինչպէս նաեւ՝ Ամերիկահայութեան թանգարանի ծրագիրն ու Փորթանթիոյի Հայաստան կատարած այցելութիւնը:

Սրբազանը գնահատեց ծերակոյտին նուիրեալ ծառայութիւնները՝ ի մասնաւորի ամերիկահայ համայնքին, եւ յաջողութիւն մաղթեց անոր յառաջիկայ ծրագիրներու իրականացման համար:

ԱՅԼԱԶԱՆ

Յաջողակ Չաւակներ Դաստիարակել



Ծնողներուն փափաքն է, որ իրենց զաւակները լաւ սորվին դպրոցը, խուսափին անյաջողութիւններէ եւ հիանալի ապագայ ունենան: Եւ հակառակ որ յաջողակ երեխայ դաստիարակելու յատուկ բաղադրատոմս չկայ, բայց եւ այնպէս, հոգեբանական հետազոտութիւնները լուսարձակի տակ կ'առնեն ծնողներուն դերը, որմէ կախեալ է շատ բան: Ըստ ամերիկեան հետազոտութիւններու, ահա թէ ի՛նչ ընդհանրութիւններ ունին յաջողակ երեխաներու ծնողները՝

– Անոնք երեխաներուն կը ստիպեն կատարել տնային կարգ մը գործեր՝ սենեակը կոկել, աղբը թափել, բոյսերը ջրել... Տան մէջ պարտականութիւններ ստանձնող երեխան հնարաւորութիւն կ'ունենայ ինքնուրոյն դասաւորելու իր սեփական կեանքը եւ հասկնալու, որ հաւաքականութեան մէջ գործը գլուխ պիտի հանուի իւրաքանչիւրին ներդրումով:

– Անոնք խստապահանջ են երեխային նկատմամբ: Բազմամեայ հետազոտութիւններ կատարելով՝ գիտնականները յայտնաբերած են, որ երեխաներուն նկատմամբ դրսեւորուած ծնողներուն խստապահանջութիւնը մեծ ազդեցութիւն ունի անոնց ապագայ յաջողութիւններուն վրայ:

Ծնողները իրարու հետ առողջ յարաբերութիւններ ունին: Հետազոտութիւններուն համաձայն, անհամերաշխ ծնողներու զաւակները աւելի վատ կը զարգանան, քան՝ հանգիստ ծնողներ ունեցողները: Միւս կողմէ՝ նաեւ հաստատուած է, որ ծնողներու ամուսնալուծութեան ծանր հետեւանքները երեխաները շատ երկար տարիներ կը կրեն իրենց վրայ:

– Անոնք բարձրագոյն կրթութիւն ստացած են: Հետազոտութիւնները ցոյց տուած են, որ բարձրագոյն կրթութիւն ստացած ծնողներուն զաւակները աւելի կը ձգտին լաւ ուսում ստանալու. հակառակի պարագային, երեխաներուն մեծ մասը կը հետեւի իր անուս ծնողներու օրինակին:

– Անոնք իրենց զաւակներուն շատ կանուխեն թուաբանութիւն սորվեցուցած են: Երեխաներուն փոքր տարիքէն թուաբանական հմտութիւններ ջամբելը հետագային կը վերածուի հսկայ առաւելութեան: Երեխան կանուխեն թող ճանչնայ թիւերը, գործնական հաշիւներ կատարել եւ խաղայ անոնց հետ:

– Անոնք կ'աշխատին: Աշխատող մայրերը իրենց երեխաներուն վրայ աւելի դրական ազդեցութիւն կ'ունենան: Թիւերու լեզուով, աշխատող մայրերու զաւակները 23 առ հարիւրով աւելի յաջողակ են, քան՝ իրենց այն ընկերները, որոնք չաշխատող մայրեր ունին:

– Անոնք հարուստ են եւ ազդեցիկ: Դժբախտաբար, սակայն, երախաներու հետագայ յաջողութիւններուն վրայ կրնան ազդել նաեւ ծնողներու հարստութիւնը եւ ընկերային դիրքը:


– Անոնք հեղինակութիւն ունին: Հետազոտողներ առանձնացուցած են երեխայի դաստիարակութեան 3 տիպ՝ թոյլատու ծնողներ, որոնք կը ձգտին բռնակալ չըլլալ եւ երեխան ընդունիլ այնպէս ինչպէս որ է: Բռնակալ ծնողները որոնք կը փորձեն երեխան ձեւաւորել իրենց չափորոշիչներու համաձայն, եւ հեղինակաւոր ծնողներ, որոնք կը փորձեն միջին եզր մը գտնել:

Կատարեալը վերջինն է. երրորդ տիպի ծնողք ունեցող երեխան կը մեծնայ՝ որպէս իրմէ մեծերը յարգող եւ ինքզինք ճնշուած չզգացող անհատ:

Տակաւին շարքը երկար է, բաւարարուինք հիմնականներով:

Առանց Դրամի՞, Թէ՞ Առանց Բջիջայինի Տունէն Դուրս Չէք Ելլեր

Կեանքի մեջ իւրաքանչիւր անձ ունի իր առաջնահերթութիւնները: Անոնք պատկերացում մը կու տան տուեալ անձին բնաւորութեան գիծերուն մասին: Պատասխանեցէք ձեզի ուղղուած հարցումին՝ առանց դրամի՞, թէ՞ առանց բջիջայինի, ապա կարդացէք արդիւնքը...



Եթէ Տունէն Դուրս Չէք Ելլեր Առանց Դրամի, կը նշանակէ, որ ծախսել սիրող անձ էք: «Դրամը եղած է ծախսելու համար», այս սկզբունքէն մեկենելով՝ շատ արագ հրաժեշտ կու տաք անոր: Օրական բազմաթիւ փոքր գումարներ կ'ընէք, բայց չէք վարանիր նաեւ մեծ գումարներ ծախսելէ: Յաճախ գումար փոխ կու տաք ձեր մտերիմներուն, կ'օգնէք չքաւորներու... Այս բոլորը շատ գեղեցիկ կը հնչեն, բայց կարելոր է դրամ խնայելը եւ անախորժ կացութիւններէ հեռու մնալը:

Ճշմարտութիւն է սակայն, որ մեծ հոգի եւ բարի սիրտ ունեցող մարդ էք:

Եթե Տունէն Դուրս Չէք Ելլէր Առանց Բջիջայինի, կը նշանակէ, որ ոչ իսկ օր մը կրնաք ապրիլ առանց շփման մէջ մտնելու: Սովորութեան վերածած էք անընդհատ թարմացնել ընկերային ցանցերու էջերը, ծանօթանալ նորութիւններու, խօսիլ հարազատներու եւ բարեկամներու հետ... Չափազանց կախեալ էք ժամանակակից արհեստագիտութենէն, այս պատճառով ալ յաճախ ձեր տեսադաշտէն կը վրիպին կեանքի գեղեցիկ պահերը: Յիշեցէ՛ք, որ շրջապատին հետ կենդանի շփումը շատ աւելի հարազատ է եւ օգտակար:

Գիտէ՞ք, Թէ...

Միսը շատ երկար տապկուելու պարագային, կը կորսնցնէ համը, տեսքը եւ սննդական արժէքը:

Խաշած միսը հիւթալի կ'ըլլայ, եթէ կտորները եռացած ջուրի մէջ եւ թէթեւ կրակի վրայ եփին:

Որպէսզի միսը լաւ կարմրի, նախքան տապկելը՝ զայն ծծուն թուղթի վրայ ցամքեցնել:

Որպէսզի իւղը շատ չներծծուի, տապկելէ առաջ իւղին 1 դգալ քացախ աւելցնել:

Մէկ քիլօ միսը խաշելէ ետք կը մնայ 600 կրամ, իսկ տապկելէ ետք՝ 620-650 կրամ:

Յօշած միսը պէտք է արագ սպառել, որովհետեւ շուտ կը քայքայքուի, նոյնիսկ՝ սառնարանը պահելու պարագային:

Կարծր միսը կը փափկանայ, եթէ կտորները ծեծուին փայտէ մուրճով:

Եփած միսը աւելի բնասպիտ կը պարունակէ եւ աւելի դիւրամարս է, քան՝ հումը:

Միսերէն ամէնէն դիւրամարսը նապաստակի միսն է, ապա՝ հաւու, կովու եւ խոզի միսերը: Ամէնէն դժուարամարսը ոչխարինն է:

Միսին 100 կրամը կը պարունակէ երեք անգամ աւելի երկաթ, քան՝ կարգ մը ընդդէմներու եւ տոյային մէջ գտնուողը: Միսին պարունակած երկաթը մարմնին կողմէ աւելի դիւրին ներծծուելու առաւելութիւնը ունի:

WWW.AZTARAR.COM

